Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 192 - Ա
որոշման

«ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՆԿՈՒՂԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ
ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի օգոստոսի 31-ի N 601–Ա որոշմամբ բարեգործական է որակվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղում բժշկական ամբուլատորիայի կառուցման ծրագիրը: Այժմ, անհրաժեշտ է իրականացնել կառուցված բժշկական ամբուլատորիայի նկուղային հատվածի արդիականացման և բակի բարեկարգման աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղ, առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	13,828,250 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղի բնակչություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 28-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղի բժշկական ամբուլատորիայում նախատեսվում է իրականացնել նկուղի ամրանավորված հատակների և պատերի ջրամեկուսացման, նկուղում տեղադրված պատուհանների բարդ փականների, նկուղի ջեռուցման և օդափոխության համակարգի տեղադրման, նկուղի ներքին էլեկտրամատակարարման և բակի բարեկարգման աշխատանքներ: Իրականացվելու է 2025 թվականի մարտի 28-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում՝ 13,828,250 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղում բժշկական ամբուլատորիայի նկուղի արդիականացման և բակի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 13,828,250 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Գավառի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ